№ 136 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 № 136

ՔԱՌԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՑ **1895** ԹԻԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 23-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղդասար և Բարսեղեան փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ Թիւրքաց հայերի մասին. Մամուլի կարծիքը Թիւրքաց հայերի մասին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր անհիմն հերքում. Գրական աշխարհից. Մեր գիւղատնտեսները. Նամակ Ալէքսանդրոպոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բալկանեան դաշնակցութիւն. Ցունաց սիեզերական պատրիարքի հրաժարականը. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կուսակցական պայքար և գիտական խաւարամիտներ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հեռագրով)

Պետերբուրգի մեր Թղթակիցը հեռագրում է մեզ հետևեալը նոյեմբերի 22-ից. „Պետերբուրգի „Нов. Время“ լրագրին Լօնդօնից հեռագրում են, որ լօրդ Կիմբերլէյ յայտնեց Թիւրքաց դեսպանին, թէ անհրաժեշտ է լաւ կառավարութիւն հաստատել Հայաստանում և մի յանձնաժողով կազմել՝ անկողմնապահ կերպով քննելու Թիւրքերի ձեռքով կատարած՝ հայերի կոտորածի հանգամանքները։ Յանձնարարված է Էրզրումի հիւպատոսին հսկելու յանձնաժողովի վրա։

„Անգլիական առաջին մինիստր Բօղբէրի հակամիտ է ընդունել Լօնդօնի հայերի պատգամաւորութիւնը։

„Հայկական մասնաժողովի կողմից, որը նպատակ ունի ցոյց անել, պատգամաւորը ճանապարհ ընկաւ Պարիզ՝ դրդելու այնտեղի հայերին մասնակցելու դեկտեմբերի 17-ին Լօնդոնում կազմվող մեծ միտինգին։ Մատդրութիւն կայ մէկ ուրիշ միտինգ կազմել ամսվայ վերջը Էդինբուրգում։

„Կ. Պոլսից „Новости“ լրագրին գրում են, որ վանի փոխ-հիւպատոսը սպանված է։ Հասարակական կարծիքը չափազանց լարված է հայկական գործերի պատճառով։

„Վերոյիշեալ լրագրի թղթակիցը, հաղորդելով արդէն յայտնի տեղեկութիւնները, աւելացնում է. „Զը նայելով հայերի անընդհատ յուզմունքներին, օսմանեան կառավարութիւնը ավտոնոմիական վարչութիւն չի մտցնի ասիական նահանգներում։ այդ պատճառով Սասունում տեղի ունեցած ապստամբութեան նման յուզմունքները անպտուղ են։ Եթէ այդ շարժումը նախապատրաստված է արտասահմանի հայերի ձեռքով, նրանք պէտք է ընդհատեն կողոտաբեր փորձերը։ Հայաստանը գոյութիւն չունի։ Դա Բոլգարիա չէ՝ երեք միլիոն խիտ ազգաբնակութեամբ։

„Ոչ Անգլիան և ոչ Ռուսաստանը դիտաւորութիւն չունեն աշխատելու, որ մի յատուկ ռեժիմ մտցնվի Հայաստանում, որը չեն կարող պաշտպանել իրանք հայերը, որովհետև ցրված են և թոյլ“։

—

Մեր միւս թղթակիցը Պետերբուրգից հեռագրում է մեզ հետևեալը։

„Այսօրվանից „Новое Время“ և „Новости“ լրագիրներին հեռագրում են. „Բօղբէրի կընդունի այն հայկական պատգամաւորութիւնը, որ եկել է միջնորդելու, որպէս զի Անգլիան միջամտի Բ. Դրան դէպի Թիւրքահայերը ունեցած յարաբերութիւնների մէջ։

„Պետերբուրգի „Биржевыя Вѣдомости“ լրագիրը մի մանրամասն և համակրական առաջնորդող յօդուած նուիրելով այդ հարցին, ասում է. „Հայերը, պէտք է ենթադրել, վերջապէս կը համոզվին այժմ, որ Մեծ-Բրիտանիայի միայնակ միջամտութեան շնորհիւ նրանք չեն կարող ազատվել քիւրդ-Թիւրքական ձրնշումներից և գազանութիւններից։ Միւս կողմից պետութիւնների կասկածոտութիւնը Ռուսաստանի արևելեան քաղաքականութեան վերաբերմամբ ներկայումս այնքան թուլացել է, որ շատ կարելի է իրանց գանգատներով և միջնորդութիւններով դիմելով Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւններին, մանաւանդ հաւատակից և հարևան Ռուսաստանին, հայերը աւելի աջողութեամբ կարող կը լինէին հասնել իրանց ամենաօրինաւոր ձրգտումների նպատակին“։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

—

Լօնդօնի հայասէր „Daily News“ լրագիրը, ինչպէս միշտ, առաջիններից մէկն էր, որ ձայն բարձրացրեց Սասունի կոտորածի մասին, տպագրելով այդ սոսկալի կոտորածի սրտաճմլիկ մանրամասնութիւնները։

Լօնդօնի մի ուրիշ նշանաւոր լրագիր, „Standart“, լրագիրը, անմիջապէս արձագանք տուեց, և տպագրեց չը լսված արշաւանքի մանրամասնութիւնները, որ Թիւրքաց զօրքը և քրդական զօրախումբը կատարեցին դէպի Բիթլիսի գիւղերը, աւերեցին աւելի քան 20 գիւղեր, և սպանեցին հարիւրաւոր մարդկանց, չը խնայելով կանանց և երեխաներին։

Պարիզի նշանաւոր „Temps“ լրագիրը նոյնպէս նկարագրելով Թիւրքաց Հայաստանում կատարվող բարբարոսութիւնները, հաղորդեց, որ սուլթանը մի յանձնաժողով է կազմել՝ կատարված գազանային անգթութիւնները քննելու համար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆ ԽԱՒԱՐԱՄԻՏՆԵՐ

II

Երբ մարդիկ որ և է հասարակական երևոյթի վրա ճիշդ հայեացք, ուղիղ տեսակէտ չունեն, նրանք, բնականաբար, չեն էլ կարող այդ երևոյթի իսկական պատճառը գտնել և պէտք է բաւականանան ընդհանուր, անբովանդակ բացատրութիւններով։ Այդ պատահել է և հայ պրոֆէսորի հետ։

Մեր մէջ գոյութիւն ունեցող կուսակցութիւնները, պրոֆէսոր Եղիազարեանի կարծիքով, «ոչ մի հիմք, ոչ մի նպատակ չունեն», բացի «հայկական անհամերաշխութիւնից»։ Անհեթեթ և անբովանդակ բացատրութիւն։

Խոստովանվեցէք, ընթերցող, որ մի երևոյթ, որը ամբողջ հասարակութեան բոլոր խաւերը բաժանել է երկու հակառակ բանակի, որի գոյութիւնը զգալի է մեր՝ և՛ հասարակական և՛ ընկերական և՛ նոյն իսկ ընտանեկան կեանքի ամեն մի քայլափոխում, չէ կարող լուրջ հիմք չունենալ. խոստովանվեցէք նոյնպէս, որ հայ պրոֆէսորի տուած բացատրութիւնը—հայկական անհամերաշխութիւնը—այնքան ընդհանուր, այնքան անբովանդակ մի պատճառ է, որ նրանով կարելի է, հետևելով Եղիազարեանի տրամաբանութեան, բացատրել ոչ միայն այսօրվայ, այլ և առասպելական Հայկից սկսած մինչև մեր օրերը հայ ազգի կեանքում տեղի ունեցած բոլոր քաղաքական, հասարակական և գրականական կուսակցութիւնները։ Բայց միթէ դա բացատրութիւն է. միթէ դրանով հայ ազգին չենք հաւասարացնի «երկոտանի կենդանիներին», որոնք դարերի ընթացքում իրար միսը ուտելուց զատ գոյութեան ուրիշ ոչ մի նպատակ չեն ունեցել։

Այժմ մենք մեր կողմից աշխատենք բացատրել, թէ հայ հասարակութեան մէջ այսօր գոյութիւն ունեցող կուսակցութիւնների պատճառը որտեղ պէտք է փնտռել։

Գրականութիւնը իրականութեան արտայայտութիւնը, կեանքի հայելին է։ Ինչ զգում, մտածում, երազում է հասարակութիւնը ինստինկտաբար, կիսագիտակցաբար, նոյնը արտայայտում են հասարակութեան լաւագոյն զաւակները գրականութեան մէջ։ Այդ պատճառով առաջադէմ հեղինակների գրուածքները մեծ շարժում, մեծ հետաքրքրութիւն են զարթեցնում հասարակութեան մէջ. այդ պատճառով գրականութեան մէջ քարոզված մտքերը, գաղափարները, իդէաները շատ թէ ուշ իրականութիւն են ստանում կեանքի մէջ. այդ պատճառով գրականական որ և է շարժման հետևում է նոյնանման շարժում իրականութեան մէջ։

Իբրև իլլիւստրացիա մեր ասածներին, յիշենք Ֆրանսիան, ուր 18-րդ դարու գրականական մեծ շարժման հետևեց 1789 թուականը. կամ յիշենք Ռուսաստանը, ուր 40-ական և 60-ական թուականների գրականական զօրեղ շարժման հետևեց ճորտերի ազատութիւնը և մի շարք այլ քաղաքական—հասարակական բարենորոգումներ։

Գրականութեան և կեանքի մէջ եղած յարաբերութիւնը ի նկատի առնելով, դժուար չէ հայ հասարակութեան մէջ այսօր գոյութիւն ունեցող կուսակցութիւնները կապել «Հիւսիսափայլի» և նամանաւանդ «Մշակի» փայլուն գործունէութեան հետ։ Ինչ կարգի մարդկանց, ինչ տեսակ գաղափարների դէմ կռիւ է սկսել «Հիւսիսափայլը», նոյն կարգի մարդկանց, նոյն տեսակ գաղափարների դէմ աւելի կատաղի կերպով, անհամեմատ աւելի մեծ աջողութեամբ ու տաղանդով մաքառել է և «Մշակը». ինչ տեսակ մարդկանց, ինչ կարգի գաղափարներ հալածել են յիշեալ առաջադէմ օրգանները տեսականապէս, խօսքի սահմանում, նոյն կարգի մարդկանց, նոյն տեսակ գաղափարներ այսօր հալածում է «Հիւսիսափայլի» և մանաւանդ «Մշակի» ժաւանդը—առաջադէմ կուսակցութիւնը—գործնականապէս, կեանքի ասպարէզում, հասարակական հիմնարկութիւնների, դպրոցների, բարեգործական ընկերութիւնների մէջ...

Այդ պատճառով ով այսօր մեր ամենայետին գաւառական քաղաքի ընտրութիւններում չէ լսում Նաղարեանցի, Նալբանդեանցի, Գրիգոր Արծրունու, Բաֆֆիի, Պատկանեանի կախարդիչ անխօս ձայները, ով Գրիգոր Արծրունու կաթողիկոսական պատգամաւոր ընտրվելը և այս տարի՝ Թիֆլիս, Երևան, Բագու, Շուշի, Մոսկվա և այլ քաղաքների ընտրութիւնների ժամանակ առաջադէմ կուսակցութեան տարած յաղթութիւնները չէ վերագրում մի և նոյն ընդհանուր շարժման անխուսափելի ալիքներին, նա կամ տգէտ է, հասարակական երևոյթներում համբակ և կամ եթէ ուսումնական է՝ նշանակում է, պատկանում է Գեօթէի տխրահռչակ դոկտոր Վագների կարգի գիտնականներին, որոնք անընդունակ են թափանցել իրերի ներքին իմաստը, ներքին խորհուրդը։ Երբ գարունը գալիս է և արեգակը կարևոր ջերմութիւն է հաղորդում մայր երկրին, ծաղիկները իրար ետևից ծլում, ծաղկում են... Մեր հասարակական կեանքը «Հիւսիսափայլի» և գլխաւորապէս «Մշակի» գաղափարների ջերմութեան տակ այսօր արտադրում է մի շարք երևոյթներ, որ բնականաբար դուր չէ գալիս խաւարամիտներին։

Հայկական առաջադիմութեան այդ թշնամիները դէթ յաջորդաբար են վարվում. դրանք այսօր դէմ լինելով կուսակցական պայքարին, իր ժամանակին էլ թշնամական դիրք են բռնել և դէպի Նալբանդեանց, Նաղարեանց, Արծրունի, Բաֆֆին, Պատկանեանը. բայց միթէ դուք ես, պ. պրոֆէսոր, աննախանձելի քաջութիւն կունենաք ցեխ շպրտելու այդ անմահ հեղինակների հասցէով։—Եթէ այո, ապա ում պէտք է զետեղէք հայկական պանտէօնում, ովքեր են ստեղծել մեր նորագոյն գրականութիւնը. իսկ եթէ ո՛չ, ապա ինչու չէք ուզում տեսնել և ճանաչել նրանց 40 տարիների ընթացքում կատուցած չինութիւնը—այսօրվայ կուսակցական շարժումը։

Եւ այդպէս մեր կուսակցութիւնների գոյութիւնը պէտք է վերագրել ոչ թէ «հայկական անհամերաշխութեան», ինչպէս կարծում է հայ պրոֆէսորը, այլ մեր նորագոյն գրականութեան մէջ «Հիւսիսափայլի» և գլխաւորապէս «Մշակի» ղեկավարութեամբ տեղի ունեցած երկու գրական զօրեղ շարժման։ Այդ իսկ պատճառով կուսակցական պայքարը մշանջենական է և քանի գնայ աւելի և աւելի մեծ ծաւալ պէտք է ստանայ. խաւարամիտների հետ կռիւ սկսեց «Հիւսիսափայլը», խաւարամիտներին յաղթեց «Մշակը» և խաւարամիտներին այսօր հալածում է առաջադէմ կուսակցութիւնը կեանքի մէջ։ Կանցնեն տարիներ, ներկայ սերնդին կը փոխարինեն նորերը, բայց վերջինների թարմ, առաջադէմ ասրրերը դարձեալ պէտք է անխնայ պատերազմ մղեն գալոց ժամանակների խաւարամիտների դէմ, և այդպէս անվերջ...

Քանի դարեր են, ինչ Անգլիայի վիգերը կռիւ են մղում տորիների դէմ և ով գիտէ, դեռ քանի քանի դարեր էլ պէտք է շարունակվի այդ կռիւը. ամբողջ դար է, ինչ Ռուսաստանում առաջադէմ ուղղութեան պատկանող մամուլը, մանաւանդ մի քանի նշանաւոր ամսագիրներ յաջորդաբար պատերազմ են մղել ռուսաց խաւարամիտ օրգանեն-

Ամերիկայի "The Daily Chronicle" լրագրի Լոնդոնի թղթակիցը գրում է, թե Սուրբ Ծննդի տոներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ինչպես հարուստները, այնպես էլ աղքատները ամենայն եռանդով ուրախանում են, ինչպես ամենուրեք, ինչպես Անգլիայում, ինչպես Գերմանիայում, ինչպես Ֆրանսիայում, ինչպես Իտալիայում, ինչպես Ռուսաստանում, ինչպես Հայաստանում, ինչպես Թուրքիայում, ինչպես Պարսկաստանում, ինչպես Հնդկաստանում, ինչպես Չինաստանում, ինչպես Ճապոնում, ինչպես Աֆրիկայում, ինչպես Ավստրալիայում, ինչպես Նոր Զելանդիայում, ինչպես Գրենլանդիայում, ինչպես Հարավային Բևեռում, ինչպես Հյուսիսային Բևեռում, ինչպես Լուսնում, ինչպես Արեգակնային համակարգի մյուս մոլորակներում, ինչպես Գալակտիկայի մյուս աստղերի մոտ գտնվող մոլորակներում, ինչպես Տիեզերքի մյուս մասերում գտնվող մոլորակներում, ինչպես Տիեզերքի մյուս մասերում գտնվող մոլորակներում գտնվող մարդիկ

ԴԱՎԱՖԱՍՈՎՏ ԴԱՖԱՅԴՆ

ԱՎԱՖԱՅԻՆ ԴԱՎԱՆԴՆ ԱՅՍ ՎԱ

Ֆրանսիայի Ազգային գրադարանում պահվում է Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ձեռագրերի մի հատուկ հավաքածու, որը գրանցված է հետևյալ համարներով՝ Դավաֆասովտ Դաֆայդն Ավա, ձեռագրեր, հատոր 78 և 79 հատոր։

Ֆրանսիայի Ազգային գրադարանի ձեռագրերի բաժնի գրադարանավարի՝ Ֆրանսուա Ֆրանսուա Դեսանտրի հրամանագրով, 1868 թվականի հունիսի 17-ին, Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ձեռագրերը ստացվեցին Ֆրանսիայի Ազգային գրադարան։ Ձեռագրերը ուղեկցվում էին ֆրանսերեն մի գրությամբ, որը գրել էր Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ընտանիքի մի անդամ՝ Ֆրանսուա Ֆրանսուա Դեսանտրի անունով։ Գրությունում ասվում է, որ ձեռագրերը «հանձնվում են Ազգային գրադարանի ձեռագրերի բաժին՝ ի հիշատակ մեր հանգուցյալ հորեղբոր՝ Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի, որի կամքն էր, որ նրա ձեռագրերը գտնվեն Ֆրանսիայի Ազգային գրադարանում»։

Ֆրանսիայի Ազգային գրադարանի ձեռագրերի բաժնի գրադարանավարի՝ Ֆրանսուա Ֆրանսուա Դեսանտրի հրամանագրով, 1868 թվականի հունիսի 17-ին, Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ձեռագրերը ստացվեցին Ֆրանսիայի Ազգային գրադարան։ Ձեռագրերը ուղեկցվում էին ֆրանսերեն մի գրությամբ, որը գրել էր Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ընտանիքի մի անդամ՝ Ֆրանսուա Ֆրանսուա Դեսանտրի անունով։ Գրությունում ասվում է, որ ձեռագրերը «հանձնվում են Ազգային գրադարանի ձեռագրերի բաժին՝ ի հիշատակ մեր հանգուցյալ հորեղբոր՝ Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի, որի կամքն էր, որ նրա ձեռագրերը գտնվեն Ֆրանսիայի Ազգային գրադարանում»։

Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ձեռագրերի հավաքածուն ներառում է 78 և 79 համարներ։ Դրանցից 78-ը ամբողջությամբ գրված է հայերենով, 79-ը՝ հիմնականում հայերենով։ Ձեռագրերի մեծ մասը գրված է թղթի վրա, մի քանի էջեր՝ մագաղաթի։ Ձեռագրերի մեծ մասը գրված է գրչագրի տեսակով։ Ձեռագրերի մի մասը գրված է գրաբարով, մի մասը՝ աշխարհաբարով։ Ձեռագրերի մեծ մասը գրված է Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ձեռքով։ Ձեռագրերի մի մասը գրված է ուրիշ անձանց ձեռքով։ Ձեռագրերի մի մասը գրված է Դավաֆասովտ Դաֆայդն Ավա-ի ձեռքով, մի մասը՝

ծութիւն հողեր անմշակ մնացած, որոնց տէրերը տարեկան հազիւ դեսիատինից 40—50 կոպէկ օգուտ են վերցնում։ Դրանից էլ քիչ հեռու կը տեսնէք փողատիրոջ, որն իր փողերը յանձնել է զանազան բանկերին 2½ կամ 5% ստանալու մտքով, որովհետև չը գիտէ, թէ ինչ կերպ գործ դնի իր կապիտալը, որ քիչ էլ աւելի արդիւնք ստանայ։

Ի՞նչն է պատճառը, որ գիւղատնտեսը հող չէ գտնում մշակելու, հողատէրը գիւղատնտես չէ գտնում, իսկ դրամատէրը՝ ոչ մէկը և ոչ միւսը։ Ի՞նչն է պատճառը, որ գիւղատնտեսութեան այդ երեք անհրաժեշտ պայմանները մեզանում երբէք չեն միանում, իրար չեն յարմարվում և բաժանբաժան մնալով՝ անօգուտ կորչում են։ Ահա հարցեր։

Այդ ոչ-ուրախալի երևոյթի հետ միասին, մեր գիւղացիների կեանքով և աշխատութեան ձևերով հետաքրքրվողը իսկոյն կը համոզվի, թէ այդ դասակարգը ինչքան ճնշված է նիւթապէս այսպիսի մի բարեբեր երկրում, ուր երկիրը ամենայն առատութեամբ արտադրում է խաղող, բամբակ, բրինձ, մեղր ու կարագ և այլն։

Պատճառը։

Պատճառները այնքան բազմաթիւ են, որ մենք անխոհեմութիւն ենք համարում միանգամից կըտրական կերպով պատասխանել, որովհետև դրանք պահանջում են մանրամասն և բարեխիղճ ուսումնասիրութիւն։

Ո՞վ կարող է այդ նշանաւոր դերը կատարել։ Մեր կարծիքով ևս, ամենաձեռնհաս մարմինները կը լինեն տեղական գիւղատնտեսական ընկերութիւնները, ինչպէս առաջարկում է գիւղատնտես Ա. Թանասեանը, և եթէ այդ ընկերութիւնները կազմվեն գործին հմուտ, բարեխիղճ և եռանդոտ անձինքներից, աներկբայ ենք, որ այդ ընկերութիւնները մեծ ծառայութիւն արած կը լինեն երկրի տնտեսական բարգաւաճմանը։

Սակայն, մեր կարծիքով, յոդուածագիր գիւղատնտեսը մի անհրաժեշտ բան մոռանում է ասել, այն է, թէ ինչ կերպ և ով պէտք է ձեռնարկի այդպիսի ընկերութիւններ կազմելուն, որի համար աւելորդ չենք համարում առաջարկելու մեր համեստ կարծիքը։

Աւելորդ և անտեղի չի լինի, եթէ ինքը յոդուածագիր Ա. Թանասեան թէ լրագրութեան միջոցով և թէ մասնաւոր կերպով մի հրաւէր կարդայ՝ ժողով գումարելու Երևանում, իբրև մի կենտրոնում, որտեղ կան թէ հողատէրեր, թէ դրամատէրեր և թէ գիւղատնտեսներ։ Երբ մասնակցել ցանկացողների մի թիւ կը գոյանայ, այն ժամանակ Երևանի նահանգապետի միջոցով կարելի կը լինի դիմել ուր հարկն է և պատրաստութիւն տեսնել այդպիսի ընկերութիւն կազմելու։

Աւելորդ չենք համարում թուել այն գիւղատնտեսների անունները, որոնք ապրում են Երևանում և Երևանի նահանգում, որոնցից մեծ մասը յարմարութիւններ չունենալով, բոլորովին ուրիշ գործով են պարապում, թողած իրանց մասնագիտութիւնը, և որոնք անկասկած մեծ համակրութեամբ կը վերաբերվեն այդ մտքին։

Ահա այդ գիւղատնտեսները. Երևանում՝ պ.պ. Մկրտիչ Մուսինեան, Կարապետ Ափրիկեան, Համբարձում Գէորգեան, Համազասպ Խուդաբաշեան, Նիկոլայ Նիկոլայեվիչ Օգարեվ-Կուդրեավցեվ, Տիգրան Գիւզալեան (Ագուլիսում), Սարգիս Միրզաեան, Աշոտ Ա. Թանասեան, Գեղամ Նաւասարդեան (Վաղարշապատում), Սուրմալուի Բլուր գիւղում՝ Բագրատ Արտաշեան։

Մեր կարծիքով, իբրև մասնագէտ գիւղատնտես, դրանք էլ բաւական են, եթէ աւելի չը լինեն. իսկ եթէ դրանց հետ մի այդքան էլ հողատէրեր, կալուածատէրեր միանան, մի այդքան էլ փողատէրեր և կոմունակի արդիւնաբերողներ, այն ժամանակ վստահութեամբ կարելի կը լինի գործին ձեռնամուխ լինել։

Ա. այժմ այսքանը։

Յով. Խոջաէյնաթ.

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Նոյեմբերի 10-ին

Մեր գաւառական քաղաքներից ոչ մէկում ասիական դարչելի անշարժութիւնը այնքան չէ պահպանել իր ոյժը, որքան մեզանում։ Երանելի անցեալի թմրած, մեռած ոգին իր ամբողջ սպանիչ ուժով ծանրացել է այստեղ մարդկանց մտքերի, հոգու վրա և չէ թոյլ տալիս ոչ մի շարժում, ոչ մի քայլ դէպի գիտակցութիւն, դէպի լոյս։ Սէր չը կայ դէպի հասարակական հիմնարկութիւնները, դէպի հասարակական գործերը։ Անտանելի ծանր, չշմեցնող տպաւորութեան տակ մարդու սիրտը կտրատվում է ցաւից, տեսնելով հասարակական ոգու այն ընդհանուր անկումը, որ տիրում է առհասարակ գաւառներում։

Այս ընդհանուր սառնութեան բացէում օպտիմիստ մարդուն ուրախացնում և ոյժ է տալիս միայն մի հանգամանք. դա այն կենդանի, վառվռուն աչխոյժն ու եռանդն է, մտքի ու հոգու այն թարմութիւնը, որ ցոյց է տալիս կեանքի ուղին գեղեցիկ յոյսերով ու ձգտումներով ոսք կոխող գաւառացի նոր սերունդը, որի սրբտումն է արձագանք գտնում հասարակական ամեն մի վիշտ, ամեն մի ցաւ։ Ահա այդ նոր սերունդն է, գաւառական երիտասարդութիւնն է, որ սկսել է հասարակութիւն դառնալ և գիտակցօրէն ու կրիտիկաբար նայել, քննադատել իր գործերը, իր դրութիւնը։

Մի ժողովրդի բարոյական ու մտաւոր բարձրութիւնը չափվում է նրանով, թէ որքան նա լուրջ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի հասարակական ամեն մի խնդիր, թէ որքան նա գործնականապէս մասնակցութիւն է ցոյց տալիս դէպի ընդհանուրի շահը ուղղված գործունէութեան մէջ, թէ որքան նա ի նկատի ունի բացի իր մասնաւոր, անհատական երջանկութիւնը՝ այլ և մեծամասնութեան, ընդհանրութեան վիճակը, մասսայի երջանկութեան գաղափարը։

Սակայն, ասացէք քաղաքացիներ, ինչ են ցոյց տալիս մեր այսպէս կոչված տեղական գործերը։ Աւելի լաւ է դիմենք փաստերին. կատարվում է 5 դպրոցների հոգաբարձութեան ընտրութիւն. երեք անգամ հրաւիրելուց յետոյ 3000 տուն ունեցող քաղաքից հազիւ 100 հոգի են ներկայ լինում։ Նշանակվում է քաղաքային հաւատարմատարների ընտրութեան ժողով սրանից ուղիղ երկու շաբաթ առաջ. դարձեալ նոյն 3000 տանից 80 հոգի հազիւ է հաւաքվում, և այդ 80 հոգին ընտրում են 120 հոգի հաւատարմատարներ, մի հրէշաւոր բան, որի նմանը որ և է քաղաքակիրթ հասարակութեան մէջ անհնարին է հանդիպել։ Հրաւիրվում է բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողով՝ վարչութեան նոր անդամներ ընտրելու, նախահաշիւը քննելու և մի քանի հերթական հարցեր վճռելու. երկու անգամ հրաւիրելուց յետոյ՝ երրորդ անգամին մօտ 95 անդամների 1/10 մասն անդամ չէ գալիս։

Մեր անշարժութեան, անտարբերութեան մի բոլորովին թարմ ապացոյց է Բարեգործական ընկերութեան վարչութեան այս օրերս երրորդ անգամ նշանակված մի նոյն ընդհանուր ժողովը։ Հաւաքվել էին մի քանի հոգի, սպասում են ժամերով, թէ հրաւիրված անդամները գոնէ այս անգամ խիղճ և պատասխանատուութիւն կունենան ներկայ գտնվելու։ Եւ ինչ. թէ Զինաստանից մարդ չարժվեց գալու և մեր ժողովին մասնակցելու,— այնպէս էլ այստեղից։

Անպարտաճանաչութիւնն էլ իր սահմանն ունի, պարոններ. միթէ, ճշմարիտ, այնքան ամուր և անշարժ են մեր մտքի կապանքները, որ դադարել ենք արդէն մեր հիմնարկութիւնները, մեր իրաւունքները յարգելուց։

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սալմաստ, հոկտեմբերի 16-ին

Կը խնդրեմ «Մշակի» խմբագրութենէն հետեւեալը տպել, եթէ կարելի է, մօտաւոր մի թվի մէջ. «Մշակի» 112 համարում տպած՝ Սալմաստի թղթակցութեան դէմ։

Սալմաստի կրթական գործի մէջ Սարփարաստի (քրիստոնէից գործերի վերահսկողութիւն անողը) միջամտութիւնը այսքան միայն եղեր է պաշտօնավարութենէս ի վեր.—Ախթխանա գիւղի գիւղացիները մի համախօսականով յանձնառու կը լինին գիւղին վարժարանը չինել և տեսչութիւնը այդ յանձնառութեան վստահելով՝ գիւղի երէցփոխին կը պատուիրէ և անձնապէս կերաշխաւորէ ալ, չէնքի նիւթերը ժամանակին գնելու։ Գնումը մասամբ մը կը կատարուի, բայց հոգաբարձուների մի մասը երէցփոխի դէմ որ և է մի շարժառիթէ մղուած՝ կուզեն յեռաձգել չինութիւնը, և տեսչութեան ալ բացատրութիւններ չեն ուզեր տալ, հակառակ Կալասարի պատուաւոր անձերի և գործակալ քահանայի կրկնակի յորդորների։ Տեսչութիւնը կը ստիպուի Սարփարաստին դիմելով՝ այդ հոգաբարձուներ կանչել և պարտաւորեցնել, որ չէնքը չինեն, ինչպէս որ յանձնառած էին։ Սարփարաստի միջամտութիւնը յիշեալ գիւղացիների համար ընդամէն 4 բուբլի կը նստի, որ դատաւորի ծառաների ոտքի պարգեն է լոկ (Պարսկաստանի մէջ դատաւորի մօտ կանչվողը և նոյն իսկ այցելողն այդ պարտաւորիչ պարգև տալու է)։

Յոդուածագիրը տեսչութեան կը վերագրէ մի ինչ որ սավրացի վաճառականի և մահլամցի այրի կնոջ մը հետ ունեցած գործի մասին Սարփարաստի միջամտութիւնը։ Կրնամ յոդուածագրին վստահացնել, որ ոչ այդպիսի մի այրի դիմել է տեսչի միջամտութեան, ո՛չ այս վերջինս այդ խնդրի մասին մի տող փոխանակած է թեմական առաջնորդի հետ և ո՛չ ալ այդ գործին ծանօթ է, որ ոչ մի կապ ունենալով կրթական գործի հետ, լոկ կը վերաբերվի Սալմաստի առաջնորդական գործակալների։

Եթէ յոդուածագիրը Սալմաստի թեմական տեսչին Տէր-Թողիկեան մի վարժարանի ընթացքը կը ներայացունէ, այն հաւաստիք կուտայ ինձ թէ ինք կերևի, որ այդ տեսակ վարժարանէ զատ ուրիշ վարժարանների մասին երբէք գաղափար ունեցած չէ. ապա թէ ոչ գոնէ մի համեստ նախակրթական ուսում ունեցող մը ներկայացնելու պատիւն կանէր ինձ։

Այս առիթով կը յայտնեմ այն անձերի, որոնց ուսուցչական պաշտօն մը գաւառիս մէջ վարելու դիմումներին չէմ կրցած նպաստաւոր մի պատասխան տալ, թող հաճին ուղղակի ինձ դիմել և բացատրութիւններս լսել, փոխանակ մամուլի թանգ էջեր այդ հաշիւներին զոհելու։

Թեմական տեսուչ Խոյ, Սալմաստ և Ուրմի գաւառների՝

Մ. Աւետիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է մէկ և կէս թերթից։

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետէվ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները նոյեմբերի 16-ից, էլի երկու շաբաթ կը մնայ Պետերբուրգում, որովհետև այդ ժամանակ պետական խորհրդի քննութեանը կը ներկայացվի մեր երկիրը կառավարելու վերաբերեալ նախագիծը։

Կ. Պոլսից մեզ գրում են. «Հայոց շրջաններու մէջ լուրեր կը պտտին, որ այս օրերս պատրիարքական տեղապահ Հմայեակ եպիսկոպոսը շրջաբերականներ պէտք է տարածէ, որով պիտի յայտարարվի, թէ հայերը գոհ վիճակ ունին Օսմանեան պետութեան մէջ»։

Այս օրերս Թիֆլիս եկաւ Լիեժի համալսարանի միներ‌ալոգիայի ասիստենտ բելգիացի Օգիւստ Կոլսոնն և այստեղից Բագու է գնում նաւթային արդիւնաբերութիւնը ուսումնասիրելու համար։ Երիտասարդ ճանապարհորդը գնում է Բագու գիտական ուսումնասիրութեան նպատակով, ունենալով բելգիական արտաքին գործերի մինիստրի յանձնարարականը։

Ցոգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ըստացանք. 1) Պրոխլադնոյից, խաչատուր Տէր-Յովհաննիսեանի միջոցով՝ 15 ր., որ հանգանակված է այնտեղի մի քանի հայ գաղթականների մէջ։ 2) Երևանից, անյայտ ումն, 1 ր.։ 3) Նովչերկասկից, Նոր-Նախիջևանցի օրիորդ Ս. Զերչոպեանից 26 ր. հետևեալ նամակով. «իմ ձեռագործ մի աշխատանքը վիճակ դցելով իմ ընկերների մէջ՝ գոյացած արդիւնքը՝ 26 բուբլի, ուղարկում եմ յոգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների։ Ուրեմն նախկին 3564 ր. 76 կ. հետ այժմ ունենք 3606 բուբլի 76 կոպէկ։

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի քաղաքացի Գրիգոր Փրիդոնեան նուիրել է Թիֆլիսի Նորաշէնի Մարիամեան օրիորդաց դպրոցին 52 հատ նոր և ամենայարմար նստարաններ և այդպիսով աղատել է ամբողջ դպրոցը իր հին, անպէտք և երեխաների առողջութեան համար վնասակար նստարաններից։ Բացի այդ գովելի նուէրից, նոյն պարոնը, համաձայն իր հօր կտակի, նուիրում է դպրոցին տարեկան 140 բուբլի, աշակերտուհիների համար չորեր գնելու։

—

Մենք ստացանք Էջմիածնի տպարանի հրատարակութեամբ լոյս ընծայած 1895 թ.ի «Օրացոյցը»։ Մենք չենք հասկանում, թէ ինչ է անում Էջմիածնի տպարանի վարչութիւնը, եթէ մի այնպիսի հասարակ բան, ինչպիսին է օրացոյցը, հրատարակվում է սխալներով լի։ Օրացոյցը հրատարակված է 1895 թ.ի համար, բայց նրա մէջ դուք կարդում էք, որ Ներսէս վարդապետ Հայկազունին սինոդի անդամ է, մինչդեռ նա մեռել է ամիսներ առաջ. կարդում էք, որ Խորէն Ստեփանէն, Անանիան, Կիւրեղ և այլն վարդապետներ են, մինչդեռ նրանք այժմ եպիսկոպոսներ են և այլն։ Մեզ կարող են ասել, որ օրացոյցը տպվել է առաջ, բայց միթէ չէր կարելի մի փոքր յաւելուածով ուղղել այդ սխալները։ Վերջապէս ժամանակ է այդ օրացոյցներին աւելացնել որ և է նոր բաժին, նոր տեղեկութիւններ։ Իսկ դրա փոխարէն Էջմիածնի տպարանական վարչութիւնը տպագրում է ամեն տարի նոյն ձևի, նոյն բովանդակութեան օրացոյցներ, առանց մի փոքրիկ փոփոխութիւն մտցնելու։

—

Երկուշաբթի օրվանից, նոյեմբերի 21-ից, Թիֆլիսի թատրոնում սկսվեցին օպերային ներկայացումները։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ֆրանսերէն լեզուով մի գիրք, որ կրում է «Ունգարիայի թագաւորութեան արտահանող ֆաբրիկանտները» վերնագիրը։ Գիրքը հրատարակված է Բուդապէշտում, Ունգարիայի վաճառականական մինիստրի հրամանով։ Այդ երկրի վաճառականութեան գործով հետաքրքրվողները կարող են մի մի օրինակ ձրի ստանալ այդ գրքից, ուղարկելով ճանապարհածախսի համար 1 ֆրանկ։ Հասցէն՝ Musée Commercial Hongrois.»

—

ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՑԻՑ մեզ գրում են. «Թէ այստեղ և թէ շրջակայ գիւղերում անասունների մէջ սաստիկ հիւանդութիւն է տիրում, որից անխնայ կոտորվում են եղներ, կովեր, արջառներ և այլն։ «Ազար» կոչված այդ անասնացաւը, որ հետզհետէ տարածվում է գիւղից գիւղ՝ սարսափելի զոհեր է արել շրջակայ գիւղերում, որտեղ մըտնողը հարիւրաւոր սատկած դէշերի է հանդիպում։ Իւրաքանչիւր տան մէջ, որ մի երկու ամիս առաջ ունէր 10—12 հատ անասուններ, այժմ մնում են միայն 4—5 հատ տաւարներ, իսկ 2—3 հատ ունեցողները բոլորը զրկվել են իրանց ունեցածից... Ցաւալի է տեսնել այն ընտանիքներին, որոնք զրկված են իրանց միակ մի լուծ եղներից՝ դառնագին կերպով ողբում են իրանց թշուառ դրութիւնը... Կարծէք նրանք կորցրած լինեն իրանց կերակրող հովանաւորող մի անդամին։ Մենք անձամբ տեղեկացանք, որ գիւղացիներից շատերը ուտում են սատկած անասունների միսը՝ մորթելով նրանց՝ շունչը փչելիս, երբ այլ ևս առողջանալու յոյսեր չեն նկատվում։ Ուրեմն հասկանալի է, որ անասուններին ուտելու համար՝ մորթում են այն միջոցին, երբ «ազար» հիւանդութիւնը արդէն ներգործել է և ցաւով ամեն կողմից բռնկել անասուններին։ Արդեօք հիւանդ անասունի միսը ուտելով՝ գիւղական ռամիկ ժողովուրդը իրան որ և է վտանգի չէ ենթարկում։ Ցանկալի է, որ այդ հանգամանքի վրա պաշտօնապէս ուշադրութիւն դարձնվէր և բժշկական քննութիւնից յետոյ՝ արգելվէր գիւղացիներին հիւանդացած և սատկելուն մօտ անասունների միս ուտելը։»

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Ձեզ արդէն հաղորդեցինք այստեղացի մի կնոջ սպանութեան մասին։ Այդ գործում մեղադրվում են մի գիւղացի, Խաթունեան անունով, և երկու կին։ Երեքն էլ ձերբակալվեցին և տարվելով Գորիս՝ բանտարկվեցին։ Նախ ուզեցել են Թունաւորել, բայց մտադրութիւնները փոխելով՝ սպանել են։ Սպանող կանայք ցոյց են տալիս, որ Խաթունեանն է իրանց դրդել և կաշառել։»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի եկեղեցիներն էլ սկսվեցին կապալով տրվել տը-

դէտներին։ Խօլէրային բացիլների պէս տգէտները երևում են զանազան կողմերում։ Այստեղի գործակալի երկու ծառաները, որոնք թատրոնի բեմից ստանայ էին տեսել և մի ուրիշը—դրանցից ոչ պակաս տգէտը,—կանչված են Երևան՝ քահանայ ձեռնադրվելու Բասարգէչար, Ալիչալու և Ղշլաղ գիւղերի համար, այն գիւղերի, որտեղ առանց այն էլ թագաւորում է տգիտութիւնը, որտեղ ժողովուրդը մինչև շլինքը խրված է խաւարի մէջ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

—

«Հավասի գործակալութիւնը» հաղորդում է հետևեալը։

«Նոյեմբերի 10-ին «Բալկանեան դաշնակցութիւն» անունով ընկերութեան կենտրոնական մասնաժողովը Պարիզի «Grand Orient» հիւրանոցում մի միջազգային կոնֆէրէնցիա կազմեց. ներկայ էին մօտ 300 անձինք, որոնց թւում և խաղաղութեան միջազգային լիգայի մի քանի անդամներ։

Բազմաթիւ քաղաքական գործողներ Հռոմից, Ցիւրիխից, Մադրիդից և Կոպէնհագէնից գրաւոր կերպով յայտնեցին իրանց ցանկութիւնը միանալ լիգային։ Նախագահ է ընտրված Մագալդաէս Արգիրիազէսի, Ալլէմանի և Վալեանի ճառերից յետոյ ժողովը մի վճիռ կայացրեց, որով հիմնվում է Բալկանեան դաշնակցութիւնը, որի նպատակը պէտք է լինի ազատել թիւրքաց լծի տակ գտնվող ազգերին և բողոքել այն գազանութիւնների դէմ, որ գործում են թիւրքերը Հայաստանում։

ՑՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

—

Եւրոպական լրագիրներին Կ. Պոլսից, նոյեմբերի 8-ից, գրում են հետևեալը.

«Ցոյների խօսակցութեան նիւթը Կ. Պոլսի յունաց պատրիարք Նէօֆիտէսի հրաժարականն է։ Ցունաց պատրիարքի հրաժարականի շարժառիթների մասին մենք ստացել ենք հետևեալ հաւաստի տեղեկութիւնները։ Երբ օսմանեան կառավարութիւնը բէրաթներ չընորհեց Մակեդոնիայի բոլոր եպիսկոպոսներին, յունաց պատրիարքարանը ամեն միջոցներ գործ դրեց յետ վերցնել տալու կառավարութեան այդ բէրաթները, և սպառնաց, հակառակ դէպքում, բողոքագիր ուղարկել օրթոդոքս եկեղեցիներին և պետութիւններին։ Սակայն պատրիարքը, որը մի շատ խաղաղասէր մարդ է, չէր կամենում այդ կտրական քայլն անել, և ձգձգում էր բողոքագրի խմբագրութիւնը։ Այսպիսով մի քանի ամիսներ անցան։ Վերջապէս բողոքագիրը վերջնականապէս խմբագրվեց և մի օրինակը ներկայացվեց պատրիարքին ստորագրելու։ Պատրիարքը համաձայնութիւն յայտնեց ստորագրել այն բողոքագիրը, որը պէտք է ուղարկվէր ռուսաց եկեղեցուն և մերժեց ստորագրել մնացածները։ Ցունաց պատրիարքի այդ վարմունքը մեծ զայրոյթ առաջացրեց յունաց սինոդի և ազգային ժողովի մէջ, որը և արտայայտվեց նոյեմբերի 6-ին։

«Պատրիարքը գնաց ռուսաց դեսպանատուն իր ցաւակցութիւնը յայտնելու ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III-ի մահվան առիթով։ Այդտեղից, առանց որ և է յատուկ շարժառիթի, գընաց արդարադատութեան մինիստրի մօտ։ Հէնց որ յունաց ազգային ժողովի անդամները տեղեկութիւն ստացան այդ այցելութեան մասին, նրանք անմիջապէս գումարվեցին և արտակարգ ժողով կազմեցին։ Երբ պատրիարքը, կէսօրից յետոյ մօտ հինգ ժամին, պատրիարքարան վերադարձաւ, նա շատ զարմացաւ լսելով որ ազգային ժողովը նիստ է կայացրել։ Պատրիարքի հարցին պատասխանեցին, թէ կէս ժամից յետոյ մի պատգամաւորութիւն կը գայ՝ յայտնելու նրան մի շատ կարևոր վճիռ։

«Նէօֆիտէս պատրիարքը իսկոյն հեռացաւ։ Որոշեալ ժամին, մի պատգամաւորութիւն մտաւ նրա բնակարանը։ Ազգային ժողովի անդամ Հացօպուլօ խօսք առնելով, յայտնեց պատրիարքին, թէ ազգային ժողովը վճռել է, որ պատրիարքը իսկոյն հրաժարական տայ։ Երբ Նէօֆիտէս պատրիարքը հարցրեց, թէ որպիսի շարժառիթներից դրդված՝ ազգային ժողովը արել է մի այդպիսի քայլ, Մէթիմ միտրոպոլիտը պատասխանեց, թէ ազգային ժողովի վճիռը անփոփոխելի է, որովհետև գործերի բեռը խիստ ծանր է նորին սրբութեան համար։ Դրանից յետոյ խմբագրվեց հրաժարականը, պատրիարքը ստորագրեց և ազգային ժողովն էլ ընդունեց։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Revue D'orient» լրագրի մէջ կարդում ենք. «Մօսուլից ստացված մի հեռագիր տեղեկացնում է, որ Դիարբէքիրի քաղդէացիների արքեպիսկոպոս Արքիշուի՝ քաղդիացիների պատրիարք է ընտրվել, վախճանված Էլիա եպիսկոպոսի տեղ։ Նոր պատրիարքը յայտնի գիտնական է և հրատարակած ունի մօտ 50 պատմական գրուածքներ։»

—Բերլինից «Figaro» լրագրին հեռագրում են նոյեմբերի 26-ից (23-ից) հետևեալը. «Արտաքին գործերի մինիստրութեան մէջ ստացված տեղեկութիւնները հերքում են այն համաձայնութիւնը, որ կայացել է Ռուսաստանի և Անգլիայի մէջ ասիական բոլոր հարցերի վերաբերմամբ։ Այդ պետութիւնները համաձայնութիւն կայացրին միայն Պամիրի և Աֆղանիստանի սահմանները որոշելու վերաբերմամբ։»

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 նոյեմբերի։ «Край» լրագիրը հաղորդում է, որ թագաւոր Կայսրին ներկայացած Լեհական թագաւորութեան ազգաբնակութեան պատգամաւորութեան անդամները նուիրեցին 30,000 ր. Վարշավայի հիւանդանոցում մի առանձին բաժանմունք հիմնելու, Ալէքսանդրա Ֆէօդորօվնա Կայսրուհու անունով։

ԼՕՆԴՕՆ, 21 նոյեմբերի։ Եպաշնական զինուորները Պօրտ-Արթուրում կողոպտեցին քաղաքը, կոտորեցին համարեա բոլոր բնակիչներին. չինական շատ գերիներ մերկացրած և հրացանի են ընկած. մի քանիսների փորերը ճղեցին, մի քանիներին մաս մաս արին։ Եպաշնացիները պնդում են, որ Պօրտ-Արթուրի ազգաբնակութիւնը մասնակցում էր կռուին, հրացաններ էր արձակում պատուհաններից, որի պատճառով եպաշնացիները այդպէս խիստ վարվեցին նրանց հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 նոյեմբերի։ Հրատարակված են՝ կանոններ երկաթուղիների մարդատար գնացքների տոմսակների վերաբերմամբ և ապրանքների տեղափոխութեան մասին ներկայ տարվայ դեկտեմբեր ամսից։

Նոյեմբերի 25-ից բացվում է ռուսաց երկաթուղիների ներկայացուցիչների ընդհանուր համագումար ժողովը։

ԼՕՆԴՕՆ, 22 նոյեմբերի։ Եպաշնական մամուլի խօսքով, Եպաշնիան դիտաւորութիւն ունի պնդել ծանր պայմանների վրա։ Խօսում են, եթէ պատերազմը չարունակվի, Եպաշնիան կը մրցնի իր պետութեանը մի ընդարձակ հող. միւս կողմից կարծում են, որ եթէ պատերազմը այժմ վերջանայ, այն ժամանակ Եպաշնիան կը բաւականանայ 400 միլիոն իւեն պատերազմական տուգանքով և իր զօրքերով գրաւած հողերը սեփականացնելով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 22-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ	. .	92 ր.	20 կ.
Բերլին վրա 100 մարկ	— . .	45 ր.	17 »
Փարիզի վրա 100 ֆրանկ	— . .	36 »	62 »
Ոսկի — — արժէ	. .	7 »	39 »
Մաքսային կուպոններ	— . .	147 »	75 »
Արծաթ — —	— . .	— »	— »
Երբայեցի դիսկոնտ	— . .	5 »	7 »
օՊտ. բանկի 5% տոմս 1 շրջանի	.	— »	— »
— — — — 2-րդ	.	— »	— »
— — — — 3-րդ	. .	— »	— »
4% պետական րէնտա.	. . . .	95 »	75 »
5% ոսկեայ րէնտա 1884 թ.	. . .	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն.	. . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.		— »	— »
— — — 2-րդ	—	— »	— »
— — — 3-րդ	—	— »	— »
— — — 4-րդ	—	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		245 »	— »
— — երկրորդ	—	220 »	— »
Պետական երկաթուղային րէնտա.		101 »	50 »
4½ րէնտա	. . . . .	— »	— »
4% Ներքին փոխառութեան	. . .	96 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
Գրաւ. թղթ. — —	.	189 »	50 »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.		101 »	50 »
4½% գրաւական թղթեր կալուած.		— »	— »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.		151 »	— »
— — — թղթադ.	.	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		101 »	25 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		100 »	25 »
Օդէսայի — —	100 »	25 »	
Թիֆլիսի — —	— »	— »	
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101 »	— »	
— — Քութայիսի —	. 101 »	— »	

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ՍԵՒ-ԲԱՂԱՔ, Թ. Ա. Մենք սովորութիւն չունենք նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ձրի «Մշակ» ուղարկել այն մարդկանց, որոնք 1895 թվի համար նոր բաժանորդ են գրվում, և ուրեմն ձեզ էլ չենք կարող ուղարկել։

ԲԱԳՈՒ, «Արօր» տպարանին։ Գրիգոր Արծրունու «Էվէլինա» էտիւդի առաջերէն թարգմանութեան խնդրողներ կան խմբագրութիւնից։ Բարեհաճեցէք ուղարկել Թիֆլիսի գրավաճառանոցներին այդ գրքից։

ԵՐԵՒԱՆ. Ա—Դօ. Ձեր վերջին թղթակցութիւնը չէ կարող լոյս տեսնել։

ՊՐՕԽԼԱԴՆԻ. Խ. Տէր-Յովհաննիսեան։ Դուք հարցնում էք Պրօխլադնիի հայերի կողմից Գրիգոր Արծրունու դագաղի վրա դրած պսակի մասին։ Ձեր ուղարկած 25 բուբլին իր ժամանակին ստացել է թաղման կարգադրիչ յանձնաժողովը, որը և դրել է պսակ ձեր բոլորի կողմից դագաղի վրա։ Այդ պսակի մասին «Մշակի» մէջ ոչինչ չէր կարող տպվել, որովհետև այն ժամանակ, «Մշակի» ընդհատվելու պատճառով, ինչպէս բոլոր, այնպէս էլ ձեր պսակի մասին ոչինչ չը տպվեց «Մշակի» մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒԲԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖԻԼԱՆՅԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
ժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Լոյս տեսաւ

ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑՑ

Հարուստ ժամանակագրութեամբ

(Եօթներորդ տարի)

Գինն է 60 կօպ. Ճանապարհածախսով 75 կ.

Բացված է բաժանորդագրութիւն

„ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ"

Ժողովածուի Դ. և Ե. գրքերի համար. արժէն 3 բուբլի։

ԳԻՒՏ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

(№ 135) 1—2

Շուտով լոյս կը տեսնի

Մ ա ն ա ե գ ա ց ց ա յ ի

„ԲԱՂԴԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ"

Գինն է 80 կօպէկ.

Դիմել՝ Чрезъ Вагаршапатъ въ Сел. Гечрлу. старшему учителю Сарикяну. (№ 135) 1—5

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի

Ր Ա Ֆ Ֆ Ի Ի

„ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ"

Բ. տպագրութիւն

Անտիպ ծանօթութիւններով և յաւելուածներով.

Գինն է 2 բուբլի։

Ցանկացողները արժէքը կանխիկ ուղարկելով կարող են դիմել ինձ՝ հետևեալ հասցէով։

Тифлисъ, Анна Раффи

Բաֆֆիի միւս աշխատութիւններից ցանկացողները պէտք է դիմեն նոյն հասցէով։

Հրատ. Այրի Աննա Բաֆֆի

(№ 135) 1—2

ՍԵՐՄԱՅԻՆ ԴԷՊՕ ՇՈՒԼՑ

ՑԱՋՈՐԴ Մ. Ի. ՖԷԴՕՐՕՎՍԿԻ

Ֆիրման գոյութիւն ունի 1832 թվից

Մ օ ս կ վ ա, Ս ա ղ օ վ յ ա, Կ ր ա ս ն ի ե-վ օ ր օ տ ա, տ ու ն Բ ա ռ ու զ է ր ի.

Բանջարանոցային, ծաղկային և գիւղատնտեսական սերմերի լիակատար պատկերազարդ կատալօգը կը դուրս գայ 1894 թվի դեկտեմբերին։ Մեր յարգելի մշտական գնողներին կատալօգը ձրի է ուղարկվում։ Իսկ այն անձինք, որոնք առաջին անգամ ցանկանում են կատալօգն ստանալ, պէտք է բարեհաճեն ուղարկել չորս եօթը կոպէկանոց մարկաներ, որոնք 3 բուբլուց ոչ պակաս պատւէրի ժամանակ կը հաշվվեն պատւէրի գումարի մէջ։ Բոլոր սերմերը բերվում են արտասահմանից ամենալաւ արդիւնաբերողներից, և նրանց իսկութիւնը ստուգվում է խնամքով մեր Դէպօում։

(№ 126) (ամ. 2) 3—8

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ժողովրդական ընթերցանութեան համար խմբագրված հետևեալ գրքերը

Վ ի պ ա գ ր ա կ ա ն

ԼԱԼՕ, Թիւրքահայերի կեանքից. Վ. Փ.	5 կ.
ԱՑՍՏԵՂ ԵՒ ԱՑՆՏԵՂ, Գ. Արծրունու	10 »
ԱՐՆԱԳԻՆ, Լէօի.	7 »
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ.	5 »
ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ, ըստ Շէքսպիրի.	5 »
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Թարգ. Խ. Մ.	5 »
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂԲԱՏ, ԳԻՒՂԱԿԱՆ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ	5 »
ԵՂԲԱՑՐԸ ԵՂԲՕՐ ԴԷՄ, Թարգ. Ց. Օ.	7 »
ԱՐՋԵՐԸ, Դարչինից, Թարգ. Խ. Մ.	5 »

Բ ն ա գ ի տ ա կ ա ն

ՊՍՏԻԿ Է, ԲԱՑՑ ՉՍՏԻԿ Է, Լունկեվիչի.	5 »
Ի՞ՆՉ Է ԿԱՑԾԱԿԸ	5 »
ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒՂԽ	6 »
ԱՐԵԳԱԿԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄԸ.	5 »

Կ ե ն ս ա գ ր ա կ ա ն

ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի.	50 »
ԽՐԻՄԵԱՆ, » » »	40 »

Ա ռ ո ղ ջ ա պ ա հ ա կ ա ն

ԽՕԼԷՐԱ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ բժ. Գ. Տ. Գ.	5 »

Օ ր է ն ս դ ր ա կ ա ն

ՋԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ Կովկասի համար կազմեց Խ. Մ.	30 »

Թիֆլիս։

Խ. Մալումեան

Մեծ Արժանաւորութեան

ՀՈՏԱԻԷՏ ՋՐԵՐ

"Պարսկական Եաստման"

Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն

„Պարսկական Եաստման"

Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եաստման"

Սապօն „Պարսկական Եաստման"

Պօմադա „Պարսկական Եաստման"

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանտը ձրի։

(ամ. 1) 7—12

Դաւիթ, Սմբատ և Արշակ Պօղոսեան Լազարեվները, Ալմազ Յարութիւնեան Նազարեան, Նինա Յարութիւնեան Խանդամիրեանը, Բալասան Յարութիւնեան և Միքայէլ Յարութիւնեան Հախումեանները ցաւով սրտի յայտնելով առաջինները՝ իրանց Թանդագին մօր, իսկ երկրորդները իրանց քրոջ՝ ստատսկի սովէտնիկի այրի

ՍՕՓԻԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԼԱԶԱՐԵՎԻ

մահը, որ տեղի ունեցաւ Ղազախի գաւառում, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 24-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցին։ Պատարագի սկիզբն է առաւօտեան 11-ժամին, իսկ թաղումը տեղի կունենայ Վէրայի գերեզմանոցում։

1—1

Վաճառվում է „կենտրոնական գրավաճառանոցում.“

ՀԵՇՏ ՄԻԶՈՑ

Ռուսերէն լեզուով կարդալ, գրել և խօսել սովորելու Հայոց լեզուի օգնութեամբ։

САМОУЧИТЕЛЬ РУССКАГО ЯЗЫКА.

Ա շ խ ա տ ա ս ի ր ե ց Վ ա ղ ե ա ն ց։

Գինն է 30 կոպ. ճանապարհածախսով 40 կոպ.

Հինգ օրինակից աւելի գնողը ճանապարհածախս չէ վճարում։ Այս դասագրքով կարող են առանց ուրիշի օգնութեան, ռուսերէն սովորել նրանք, որոնք քիչ շատ հայերէն կարդալ գիտեն։

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, Овакиму Айвазянцу. Чугуреты, Гончар. ул. № 44.

1—1

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104

Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թուին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻՒԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիոնի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած

ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . .
„Театральныя“. . . . . 10 հատը 5 կոպ.
„Флора“. . . . . .
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.

կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։ Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։

(№ 104) 0—22



Ա. ԿՕՊՊԻ

ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ

ԽԱՆՈՒԹՈՒՄ

(Միքայէլեան փողոց, № 132)

կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 բուբլուց մինչև 450 բուբլի արժողութեամբ։

(№ 119) 11—25

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի աշխատասիրած

„ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“։

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի այս հասցէով. Թիֆլիս, Եկիզաւէտեան փողոց, տուն № 45, աշխատասիրողի այրին։

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ճանապարհածախսը գնողների վրա է։

25—25 (№ 81

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Հնարողներ

„ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆԻ“

Զանազան գոյնի

Նորութիւն! տուալէտի ջուր

„Օ-ԴԸ-ԲՐՕԿԱՐ“

Զգոյշ պէտք է լինել կեղծումներից

(ամ. 30 № 67)

7—10

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկներ, կիսագիշերօթիկներ և գիշերօթիկներ։ Սօլօլակ, Դանօվսկայա փ. № 11.

(№ 127) 9—10

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Վ. Ի. ՏԷՐ—ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

(Սօլօլակ, Սադովայա, Սերգիեվսկայա փողոց, Տէր-Մկրտչեանցի տան հանդէպ, № 46)

Կովկասեան Ուսումնարանական Շրջանի պ. Հոդաբարձուի թոյլտուութեամբ, այս տարվայ սեպտեմբերի 3-ից բացվում է դպրոց պանսիօնով (տղաների համար)։ Դպրոցում ընդունվում են երկսեռ մանուկներ՝ պատրաստելու համար նրանց մտնելու կառավարչական միջնակարգ դպրոցները։

Պայմանների մասին հարցնել պանսիօնում։

(№ 130) 5—6

Ի. Ա. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Ցանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թերիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։

Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 բուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում։

Ուսուցանում է։

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար { Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։

(№ 16) (2) 37—100

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Մեծ պահանջը և ահագին հռչակը մեր հնարած

ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆԻ

ԳԼԻՑԷՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ

ԳԼԻՑԷՐԻՆԵԱՆ ՓՕՇԻՒ,

ԷԿՍՏՐԱԿՏ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵԱՍԱՄԱՆԻ ԵՒ ՐԵԶԵԴԱՑԻ ԾԱՂԻԿՆԵՐԻՑ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻԿՆԵՐ և այլն

ստիպում է մեզ հետ մրցողներին ՆՄԱՆԵՑՆԵԼ, ոչ միայն անունները, այլ և մեր մանրագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի դրանով մոլորեցնեն հասարակութիւնը և այդպիսով մեծացնեն իրանց արդիւնքների վաճառումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուարժան գնողներին, մեր արդիւնքները գնելու ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնել ֆիրմայի և գործարանական մարկայի վրա։

Բարձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

8—12 (№ 74—ամ. 15)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է **ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ**, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 բուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-դրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ռէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ։

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 109—130 (2.)

ՄԻԶՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ

բժշկական դեպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՂԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագոլ ծական Ապրանքների Վաճառման կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։

№ 128 (91 թ.) 39—40

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Ноября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.